

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման  
կարևորությունը

Հաստատություն՝ Երևանի հ.40 մտւր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Լուսինե Թումանյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

## Բովանդակություն

Ներածություն .....	3
Գլուխ 1. Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը .....	4
Գլուխ 2. Հայրենասիրության գաղափարը .....	6
Գլուխ 3. Հայրենաճանաչողության դաստիարակչական նշանակությունը .....	8
Գլուխ 4. Մեր հայրենիքի խորհրդանիշները .....	9
4.1. ՀՀ դրոշ .....	9
4.2. ՀՀ զինանշան .....	11
4.3. ՀՀ օրհներգ .....	12
Դիտարկում .....	16
Եզրակացություն .....	18
Առաջարկություններ .....	19
Օգտագործված գրականության ցանկ .....	20

## Ներածություն

Արդի ժամանակներում առավել կարևորվում է նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության ձևավորման կորևորությունը: Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նպաստում է երեխաների մեջ սերմանելու սեր դեպի հայրենիքը: Ազգի նկարագիրը պահելու և հայրենիքին տեր կանգնելու հիմքում ընկած է հայրենաճանաչողությունը: Անհատն այնքանով է տեր կանգնում իր հայրենիքին, որքանով ճանաչում է այն և այդ ճանաչողությունն է իր հետ բերում կապվածություն, սեր և նվիրում:

Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչողությունից: Հայրենաճանաչողությունն դաստիարակելը այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկն է: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացը անհրաժեշտ է սկսել նախադպրոցական հաստատություններից, որի հիման վրա էլ կձևավորվի նրանց հայրենաճանաչողությունը: Սերմանելով սեր հայրենիքի, քաղաքի, հայրենի բնության հանդեպ, ծանոթացնելով երկրի մշակույթին և պատմությանը՝ յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իրեն շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ: Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտանիքում և մանկապարտեզում:

Հայրենաճանաչողության նպատակն է՝

- Ծանոթացնել մեր հայրենիքի խորհրդանիշներին՝ դրոշ, զինանշան և օրհներգ:
- Ձևավորել սաների մեջ հայրենասիրություն:
- Դաստիարակել հոգատար վերաբերմունք հայրենի բնության հանդեպ:



Գլուխ 1

## Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար,

որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է:

Սենեկա


Հայրենասիրությունը հայրենիքի հանդեպ սիրո դաստիարակությունն է, նրան նվիրվածությունը, նրա հանդեպ պատասխանատվությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության խնդիրները բավականին շատ են: Երեխաների մեջ ձևավորվում է սիրո զգացում հայրենի բնության, քաղաքի, բակի, մանկապարտեզի, տան, ընտանիքի նկատմամբ: Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մաս է և հիմնական խնդիրներից մեկը: Դաստիարակի և ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնարավորինս արթնացնել սեր հայրենի հողի նկատմամբ: Նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն նրանց դառնալ արժանավոր մարդ և իրենց երկրին արժանի քաղաքացի:

Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի, տարածաշրջանի հետ երկար և բարդ գործընթաց է: Դրական արդյունքի կարելի է հասնել միայն համակարգված աշխատանքի միջոցով: Երեխաներին պետք է սովորեցնել սիրել իրենց քաղաքը:



Հայրենասիրական դաստիարակության համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ և ձևեր՝ հաշվի առնելով երեխայի աշխարհայացքը: Այդ նպատակով արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ, դիտարկումներ, բացահայտումներ, որոնք ավելի կմոտիվացնեն երեխաներին սույն թեմայի ընկալմանը և յուրացմանը: Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքների հետ: Ընտանիքի հետ աշխատանքում մանկապարտեզը պետք է ապավինի ծնողներին՝ որպես երեխայի անհատականության ձևավորման իրավահավասար մասնակիցներ: Հայրենաճանաչողության դաստիարակության նպատակն է՝ կրթել հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին: Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում են բարձր սոցիալական մոտիվներ և զգացմունքներ: Այս ազդեցության

արմատները գտնվում են մայրենի լեզվում, որը երեխան լսում է երգերից, խաղերից, մեծահասակներից, իրեն շրջապատող այն միջավայրից, որում նա ապրում է:



Գլուխ 2

### Հայրենասիրության գաղափարը

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն

առ այսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով:



Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրերասիրության վերածնունդը:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

### Գլուխ 3

#### Հայրենաճանաչողության դաստիարակչական նշանակությունը

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացման շրջանն է: Մտածելով հայրենասիրական զգացմունքների ծագման մասին նրանք միշտ դիմում են մանկության տպավորություններին: Սա պատուհանի տակի ծառն է, սա այն փողոցն է որով նրանք քայլել են, և հայրենի մեղեդիները:

Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված ու ուժեղ: Հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ հայրենի հողի, հայրենիքի հանդեպ սիրո զգացողության ձևավորում՝ հայրենի մշակույթին և ավանդույթներին ծանոթանալու համար:



Ժամանակակից հանրակրթարանի խնդիրներից է երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում հայրենասիրական կատարողականությունը ուսուցանելիս: Այս հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ հենց հայրենիքի համար պայքարին, հայրենիքին, հայրենիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային ազատագրական, ժողովրդական ռազմի ու



զինվորի երգերն են ազդում կրթվող սերունդների հայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետության վրա, նրանց տալիս բարոյական բարձր ուղենիշներ և նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը: Հայրենասիրական երգերի, ազգային-ազատագրական ու ժողովրդական երգերի ուսուցման նշանակությունը և կարևորությունը, վերջիններս օժտված են երեխայի արժեհամակարգի ձևավորման և նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելու հսկայական ներուժով:

## Գլուխ 4

### Մեր հայրենիքի խորհրդանիշները

#### 4.1. ՀՀ դրոշ

Պետական դրոշը որոշակի գույնի (գույների) ու չափի պաստառ է՝ ամրացված սրածայր ձողի վրա: Դրոշը գործածվել է դեռևս Հին աշխարհի երկրներում՝ առավելապես ռազմական նպատակներով՝ որպես զինվորների հավաքի ու համախմբվելու, հեռվից լավ տեսանելի նշան:

Դրոշի օգտագործման վերաբերյալ հայոց ամենավաղ տեղեկությունը կապված է Հայկ Նահապետի անվան հետ. գալով Բզնունյաց ծովի (Վանա լիճ) շրջանը՝ նա իր դրոշն է պարզել մի ժայռի վրա:

Օրինակ՝ Արյունից ծորած երիզ մի կարմիր,

Երկնքից պոկված կտոր մի կապույտ,

Հասուն հասկերի շող նարնջագույն

Եվ դարերի հավատի դրոշ Եռագույն:

Անդրանիկ Ծառուկյան

Բանաստեղծ

«ՀՀ պետական դրոշի մասին» ՀՀ օրենքով (15. 06. 2006) Հայաստանի Հանրապետության դրոշը Հայաստանի առաջին հանրապետության (1918–20 թթ.) եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով՝ լայնության և երկարության 1:2 հարաբերությամբ:



Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը՝ հարատևման, Հայկական բարձրավանդակի, քրիստոնեական հավատի, Հայաստանի անկախության և ազատության համար, կապույտը՝ ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո, նարնջագույնը՝ հայ ժողովրդի արարչական տաղանդն ու աշխատասիրությունը:

Պետական դրոշը ծածանվում է ՀՀ Ազգային ժողովի, Կառավարության, Սահմանադրական դատարանի, պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, դատախազությունների, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի, դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսությունների շենքերի, հանրակրթական հաստատությունների մուտքերի մոտ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղերում:

Պետական դրոշը բարձրացվում է հանրապետությունում մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում փակման արարողությունների ժամանակ, բարձրացվում է նաև հայ մարզիկներին միջազգային մրցումներում մրցանակային պարգևներ հանձնելիս:

## 4.2. ՀՀ զինանշան

Պետական զինանշանը խորհրդանշում է երկրի հասարակական-քաղաքական կարգը: Զինանշանների սաղմերն ի հայտ են եկել նախնադարյան հասարակարգում, առկա են նաև Հին աշխարհի ժողովուրդների բազմաթիվ խորհրդանշային պատկերներում: Վաղ անցյալում ազնվականական կամ իշխանական տները, երբեմն նաև առանձին անձեր, պետության կազմի մեջ մտնող վարչատարածքային միավորներ նույնպես ունեցել են իրենց զինանշանները:

«ՀՀ պետական զինանշանի մասին» ՀՀ օրենքով (15. 06. 2006թ.) Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի առաջին հանրապետության զինանշանն է: Հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոչոյանը:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի 4 թագավորությունների՝ Բագրատունիների (վերևից՝ ձախ), Արշակունիների (վերևից՝ աջ), Արտաշիսյանների (ներքևից՝ ձախ), Ռուբինյանների (ներքևից՝ աջ) զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն:

ՀՀ զինանշանի պատկերը տեղադրվում է բոլոր այն շենքերի ճակատներին, որտեղ ծածանվում են ՀՀ դրոշը:



### 4.3. ՀՀ օրհներգ

Պետական օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով:

Ըստ «ՀՀ պետական օրհներգի մասին» ՀՀ օրենքի (25.12.2006), Հայաստանի Հանրապետության օրհներգը Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն է՝ «Մեր հայրենիքը» (խոսքը՝ որոշ փոփոխություններով, Միքայել Նալբանդյանի, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի):

Պետական օրհներգը պարտադիր հնչում է պաշտոնական հանդիսությունների ժամանակ՝ պետական դրոշմը բարձրացնելիս, Ազգային ժողովի նստաշրջանների, հանրապետությունում անցկացվող միջոցառումների, միջազգային և համապետական մարզական մրցումների պաշտոնական բացման ու փակման, միջազգային մրցաշարերում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին պարգևների հանձնման հանդիսավոր արարողությունների ժամանակ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: Երբ հնչում է պետական օրհներգը, ներկաները ոտքի են կանգնում և դեմքով շրջվում դեպի պետական դրոշմը, տղամարդիկ հանում են գլխարկները:



## Պարապմունքի նմուշ-օրինակ

**Թեմա՝** «Հայաստանն իմ տունն է»

**Տեսակը՝** պատմում նկարների միջոցով

**Նպատակը՝**

Հստակեցնել և ամրակայել երեխաների գիտելիքները Հայաստանի Հանրապետության վերաբերյալ: Ծանոթացնել երկրի դրոշին, զինանշանին, օրհներգին, Երևանի տեսարժան վայրերին, հուշարձաններին:

Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, ամրապնդել հիշողությունը:

Արթնացնել հայրենասիրական զգացումներ և հետաքրքրություն Հայաստանի անցյալի ու ներկայի նկատմամբ: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում հայրենիքի հանդեպ:

**Անհրաժեշտ պարագաններ՝**

ՀՀ քարտեզը, դրոշը, զինանշանը, օրհներգը, ՀՀ տեսարժան վայրերի նկարներ

## Պարապմունքի ընթացքը՝

Դաստիարակ- Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով:

Ընդունել երեխաների բոլոր պատասխանները:

Դաստիարակ- Հայրենիքը մեր հողն ու ջուրն է, որտեղ մենք ծնվել և մեծանում ենք:

Այստեղ ապրում են մեր ծնողները, հարազատները: Դա մեր մանկապարտեզն է, մեր ընկերները, մեր բակի ծառերը, Մասիս լեռն է, Արագածը, Սևանա լիճը և այլն:

Մեր հայրենիքը Հայաստանի Հանրապետությունն է, մայրաքաղաքը՝ Երևանը, մենք բոլորս հայ ենք: Մեր հայրենիքի խորհրդանիշներն են՝ ՀՀ դրոշը, զինանշանը և օրհներգը:

Դաստիարակը ցուցադրում և ներկայացնում է զինանշանը և դրոշը, պատմում դրանց մասին, ապա երեխաները ունկնդրում են օրհներգը:

Դաստիարակը ցուցադրում է ՀՀ-ի մի շարք տեսարժան վայրերի պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող կոթողներ պատկերող նկարներ և բացատրում, թե ինչու են Հայաստանն անվանում «թանգարան բաց երկնքի տակ»:

Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է: Մենք հայրենիք ենք անվանում այն վայրը, ուր ծնվել ենք, որտեղ մեր ծնողներն են, պապիկներն ու տատիկներն են:

Որպես ֆիզ. դադար երեխաների հետ կարելի է վերհիշել մի քանի ոտանավոր Հայաստանի մասին:

Օրինակ՝ Իմ Հայաստան, իմ հայրենիք,

Երկնքի չափ սիրում եմ քեզ:

Ես դեռ փոքրիկ, շատ եմ փոքրիկ,

Բայց արդեն շատ բան գիտեմ ես:

Ապա դաստիարակը երեխաներին է ցուցադրում պատկերաշար նկարներ և առաջարկում պատմություն հյուսել դրանց միջոցով: Նախապես երեխաները բաժանվում են խմբերի, յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ նկար: Պատմությունը պետք է կազմված

լինի 3-4 նախադասություններից: Վերջում դաստիարակն ամբողջացնում և ամփոփում է պատմությունը և երեխաների հետ միասին վերնագրում այն:

Օրվա երկրորդ կեսին երեխաները նկարելու միջոցով կվերարտադրեն իրենց ստեղծած պատմությունները և կստանան գիրք Հայաստանի մասին

:





## Դիտարկում

Կարևորելով հայրենաճանաչողության ձևավորման դերը նախադպրոցականի կյանքում, իմ մանկավարժական գործունեության ընթացքում իրականացրել եմ բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման տոնին, ՀՀ անկախության տոնին, մայիսյան տոներին և այլն: Ծնողների աջակցությամբ կատարել ենք այցեր և էքսկուրսիաներ Երևանի մի քանի պատմամշակութային վայրեր, դիտարկել Հայաստանի պատմության մեջ կարևորագույն դեր ունեցած անձանց արձանները և դիմանկարները:



Մաների համար հատկապես հիշարժան էին այցելությունները Մատենադարան, Հովհ. Թումանյանի անվան տուն-թանգարան, ինչպես նաև Մարտիրոս Մարյանի անվան տուն-թանգարան: Էքսկուրսիաները բազմաբովանդակ էին, երեխաները հետևել են քաղաքավարության կանոններին, սովորել իրենց ճիշտ դրսևորել մշակութային վայրերում: Ամրապնդվել է անվտանգության նորմերի իմացությունը՝ ճանապարհային երթևեկության կանոնները պահպանելիս: Երեխաները հատուկ ուշադրություն են



դարձրել քաղաքի աղտոտվածությանը, նրանց մեջ արթնացել է քաղաքը կոկիկ պահելու պատասխանատվության ձգտում:

Մաներս հետագայում դրսևորել են հաղորդակցության հմտություններ՝ տպավորությունները պատմելով բացակա ընկերներին և ծնողներին: Տարվա ընթացքում իրականացվում են մի շարք պարապմունքներ և այլ միջոցառումներ իմ ընտրած այսքան արդիական թեմայի շրջանակներում:



## Եզրակացություն

Պարապմունքի ընթացքում կատարվեց ուսումնասիրություն՝ «Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը» թեմայով: Կարծում եմ՝ կիրառված մեթոդների միջոցով որոշակի գիտելիքներ փոխանցվեցին երեխաներին՝ հոգի, սիրտ, միտք եռամիասնության մշտական կիրառմամբ:

Պարապմունքը նպաստեց արժեհամակարգ ճանաչող անհատի ձևավորմանը, ով միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ հասարակության զարգացմանն ու վերափոխմանը: Հաջորդող օրերի ընթացքում բացահայտվեցին երեխաների հոգում պատերազմի թողած հետքերը:



## Առաջարկություններ

Անհրաժեշտ է ստեղծել միջավայր, որը կարթնացնի երեխայի հայրենասիրական ոգին, նրա մեջ գեղեցկության զգացումը, հետաքրքրություն կսերմանի դեպի ազգայինը: Սա կօգնի երեխաներին վաղ տարիքից հասկանալ, որ նրանք հայ ժողովրդի մի մասնիկն են: Մենք՝ դաստիարակներս, պետք է օգտագործենք բանահյուսության բոլոր տեսակները՝ բանաստեղծություն, հեքիաթներ, ասացվածքներ, երգեր, տաղեր, պարեր, երեխաներին ազգասեր դարձնելու և հետագայում հայրենիքը շենացնելու նպատակով: Ժողովրդական արվեստում դեռևս պահպանվել են բարոյական արժեքներ՝ բարություն, գեղեցկություն, ճշմարտություն, քաջություն, աշխատասիրություն և հավատարմություն, որոնց հիմնաքարերը դրվում են մանկապարտեզում:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Սարգսյան Լ.՝ «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2013թ.
2. <https://www.arlis.am/>, ՀՀ Սահմանադրություն
3. <https://escs.am/am/static/preschool-sdication?s=edu>
4. <https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6>